Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 13-05-2022 թ. որոշմամբ
««ՀԱՍՐԱԹՅԱՆ-ՄԻՆԱՍՅԱՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ-ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2021 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՍՐԱԹՅԱՆ-ՄԻՆԱՍՅԱՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ-ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ՇԵՆԳԱՎԻԹ ՇԵՆԳԱՎԻԹ ԹԱՂԱՄԱՍ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ 56/2
1.3 Պետական գրանցման համարը		222.160.1009445
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2018-03-14
1.5 ՀՎՀՀ-ն		02272852
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)96770401
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.hmf.am
1.8 Էլեկտրոնային փոստը		annbadalyan91@mail.ru
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Հրաչյա Քեշիշյան		
Մերի Գրիգորյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	4	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Մայրության նպաստի փոխհատուցում	503,192
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Կանոնադրությամբ սահմանված ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտ (հրատարակչական գործունեություն)	256,000

	Հիմնական միջոցների վաճառքից եկամուտ	1,327,000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Նվիրատվություն կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման, հայ արվեստի, պատմագիտական, մշակութային, ստեղծագործական ժառանգության ուսումնասիրության և հանրահռչակման համար	40,215,250
	Կանխավճարի վերադարձ	270,000
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Հաստաթյան մատենաշար, գիրք 1-ին՝ Ֆենիքս Դարբինյան. քաղաքին ուրախություն պարգևած ճարտարապետը	10,325,521	
Հասրաթյան մատենաշար, գիրք 2-րդ՝ Մորուս Հասրաթյան	2,475,685	
Հասրաթյան մատենաշար, գիրք 3-րդ՝ Վալենտին Պոդպոմոգով	584,262	
Ֆիլմ Ճգնաժամ - Առերեսում	1,535,271	
Մինասյան մատենաշար, պատմագիտական՝ հետազոտություններ՝ Վերաիմաստավորելով 20-րդ դարի Հայոց պատմությունը	28,933,697	
Քաղաքական կուլտուրա / Քաղաքական գործունեություն և անհատ	953,069	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	44,807,505	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	44,807,505	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 16 թերթից:

թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Ֆինանսական հաշվետվություններ և

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Հասրաթյան–Մինասյան»
մշակութային-հասարակական հիմնադրամ

31 դեկտեմբերի 2021թ.

Բովանդակություն

	էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	5
Համապարփակ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	7
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	8

"Ֆոր Էյ Քեսալթինգ" ՓԲԸ

"Four A Consulting"CJSC

audit — accounting — advisory — assurance

ՀԱՊԿ 24 Ռենդար 1 20 0219
Հասցե Նալբանդյան 50/136 , ք Երևան 22,
Հեռախոս +374(10) 52 08 47

www. 4aconsulting.am
info@4aconsulting.am

CAA NGO Register 1 20 0219
Address Nalbandyan 50/136, Yerevan, RA
Telephone +374(10) 52 08 47

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

"ՀԱՍՐԱԹՅԱՆ -ՄԻՆԱՍՅԱՆ " ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ-ի հոգաբարձուների խորհրդին,

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել "Հարության-Մինասյան" մշակութային-հասարակական հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները պատրաստված միկրոկազմակերպությունների համար ՀՀ օրենսդրությանը համապատասխան, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2021թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Հիմնադրամի 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ միկրոկազմակերպությունների համար ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *"Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար"* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր միկրոկազմակերպությունների համար ՀՀ օրենսդրությանը համապատասխան,, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլ ընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:
Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:

Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

15 փետրվարի 2022թ.

Անիկ Մարտիրոսյան

Տնօրեն-Բաժնետեր/Աուդիտի ղեկավար

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	4,430	6,285
Ոչ նյութական ակտիվներ	5	613	206
		5,043	6,491
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	6	23,209	13,574
Դեբիտորական պարտքեր	7	3,792	2,618
Դրամական միջոցներ	8	2,356	4,592
		29,357	20,784
Ընդամենը ակտիվներ		34,400	27,275
Կապիտալ և պարտավորություններ			
		-	-
		-	-
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	9	28,252	20,065
		28,252	20,065
Ընթացիկ պարտավորություններ			
Եկամուտներին վերաբերող շնորհներ	9	3,790	5,610
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	10	698	88
Շահութահարկի գծով պարտավորություն	11	608	-
Չօգտագործված արձակուրդի պահուստ		1,052	1,512
		6,148	7,210
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		34,400	27,275

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2022թ. փետրվարի 15-ին՝

Մերի Գրիգորյան
Գործադիր տնօրեն

Անհա Բաղալյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունները պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունների հետ միասին:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ

	Ծանոթ.	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վաճառքից հասույթ		2,048	-
Ինքնարժեք		(2,048)	
Շնորհից եկամուտ	9	33,848	34,191
Այլ եկամուտ		1,327	-
Օրագրի ծախսեր	12	(27,711)	(34,247)
Նյութական արժեքների վերագնահատման ծախսեր		(5,716)	-
Այլ ծախսեր		(1,139)	-
Ֆինանսական եկամուտ/ծախսեր		(1)	56
Շահութահարկի զծով ծախս		(608)	-
Տարվա արդյունք		-	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ

	2021 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցներիհոսքեր		
Տարվա արդյունք	-	-
Ճշգրտումներ		
Շահութահարկի գծով ծախս	608	-
Շեղրիից եկամուտ	(33,848)	(34,191)
Մաշվածության և ամորտիզացիայի ծախս	817	979
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	1	(56)
Գործառնական վնաս նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ	(32,422)	(33,268)
Դեբիտորական պարտքերի փոփոխություն	(1,174)	(1,261)
Պաշարների փոփոխություն	(9,635)	(12,701)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	150	1,171
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	(43,081)	(46,059)
Վճարված շահութահարկ	-	-
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(43,081)	(46,059)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(508)	(6,411)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում	1,139	-
Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	631	(6,411)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ակտիվներին/եկամուտներին վերաբերող շեղրիներ	40,215	54,463
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	40,215	54,463
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	(2,235)	1,993
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(1)	56
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	4,592	2,543
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	2,356	4,592

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

"Հարության-Մինասյան" մշակութային-հասարակական Հիմնադրամը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2018թ. մարտի 13-ին:

Հիմնադրամը շահույթ չհետապնդող կազմակերպություն է:
Հիմնադրամի կառավարման բարձրագույն մարմինը և Հիմնադրամի գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների խորհուրդն է:

2021թ. հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 3 մարդ (2020թ. 4 մարդ):

Հիմնադրամի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Գարեգին Նժդեհ 56/2 գրասենյակային տարածք:

2. Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են միկրոկազմակերպությունների համար ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
Ներկայումս միկրոկազմակերպությունների համար ՀՀ օրենսդրությունը չի պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար: Եթե ՀՀ օրենսդրությունը չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման համար, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի հաշվառման ընդհանուր սկզբունքների վրա:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացվել են իրական արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է("դրամ"), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույն կերպով է արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական էությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Կազմակերպության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ("ՀՀ ԿԲ") կողմից սահմանված հաշվարկային միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվեփակման ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվեփակման ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված հաշվարկային միջին փոխարժեքը.

Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքները.

	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Եվրո	542.61	641.11
ԱՄՆ դոլար	480.14	522.59
Ռուբլի	6.42	7.02

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը,հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Մեքենաներ և սարքավորումներ	-	1 տարի
Արտադրական և տնտեսական գույք	-	5-8 տարի
Այլ հիմնական միջոցներ	-	10 տարի:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Հիմնադրամի կողմից և ունեն օգտակար ծառայության ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:
Ամորտիզացիան ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների *մասին* հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 1-10 տարի:

3.4 Շնորհներ

Շնորհները, ներառյալ ոչ դրամային շնորհները՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են իրական արժեքով որպես հետաձգված եկամուտ:
Շնորհը ճանաչվում է որպես եկամուտ՝ սիստեմատիկ եւ ռացիոնալ հիմունքով, ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերմանը վերաբերող շնորհները ներառվում են ոչ ընթացիկ պարտավորություններում եւ ճանաչվում են որպես եկամուտ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

3.5 Հատուցումներ աշխատակիցներին

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

3.6 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալից ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնց իրական արժեքի փոփոխությունները վերագրվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությանը, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

Ֆինանսական ակտիվներ

I. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները և բանկային հաշիվների մնացորդները:

Ֆինանսական պարտավորություններ

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

I. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.7 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

4. Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Համակարգչային տեխնիկա,	Արտադրական , տնտեսական գույք	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	359	856	-	1,215
Ավելացում	240	1,665	4,470	6,375
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	599	2,521	4,470	7,590
Ավելացում	-	-	-	-
Օտարում	-	(1,220)	(150)	(1,370)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	599	1,301	4,320	6,220
Կուտակված մաշվածություն				
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	359	27	-	386
Տարվա ծախս	234	248	437	919
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	593	275	437	1,305
Օտարում	-	(203)	(28)	(231)
Տարվա ծախս	6	265	445	716
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	599	337	854	1,790
Հաշվեկշռային արժեք				
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6	2,246	4,033	6,285
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	964	3,466	4,430

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնադրամը չունի գրավադրված հիմնական միջոցներ:

5. Ոչ նյութական ակտիվներ

Հիմնադրամը 2021թ. ձեռք է բերել 508 հազար դրամի ոչ նյութական ակտիվներ՝ դոմեններ, ամորտիզացիան կազմել է 101 հազար դրամ: Հիմնադրամը 31.03.2021թ. դուրս է գրել ամբողջությամբ ամորտիզացված դոմեններ ընդհանուր 36 հազ. դրամ արժեքով:

6. Պաշարներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Անավարտ արտադրություն	23,025	13,574
Արտադրանք	184	-
	23,209	13,574

2021թ.

Հիմնադրամը 2021թ. իրականացրել է Պատմագիտական հետազոտությունների իրականացման «Վերաիմաստավորելով 20-րդ դարի հայոց պատմությունը» խորագրով դրամաշնորհային ծրագիրը, որի շրջանակներում կատարել են հետևյալ նվիրատվությունները.

Վարդան Ոսկանյանին 2,700 հազար ՀՀ դրամի չափով՝ պատմագիտական հետազոտության իրականացման համար:

Միհրան Գալստյանին 1,536 հազար ՀՀ դրամի չափով՝ պատմագիտական հետազոտության իրականացման համար:

Աշոտ Հայրունիին 2,400 հազար ՀՀ դրամի չափով՝ պատմագիտական հետազոտության իրականացման համար:

Ավագ Հարությունյանին 1,320 հազար ՀՀ դրամի չափով՝ պատմագիտական հետազոտության իրականացման համար:

Ռուբեն Մելքոնյանին 1,440 հազար ՀՀ դրամի չափով՝ պատմագիտական հետազոտության իրականացման համար:

Նաիրա Սահակյանին 1,440 հազար ՀՀ դրամի չափով՝ պատմագիտական հետազոտության իրականացման համար:

Արսեն Բոբոխյանին 1,344 հազար ՀՀ դրամի չափով՝ պատմագիտական հետազոտության իրականացման համար:

2020թ.

Հիմնադրամը 2020թ. իրականացրել է Պատմագիտական հետազոտությունների իրականացման «Վերաիմաստավորելով 20-րդ դարի հայոց պատմությունը» խորագրով դրամաշնորհային ծրագիրը, որի շրջանակներում կատարել են հետևյալ նվիրատվությունները.

Գալստյան Միհրանին 2,304 հազար ՀՀ դրամի չափով՝ պատմագիտական հետազոտության իրականացման համար:

Մելքոնյան Ռուբենին 2,160 հազար ՀՀ դրամի չափով՝ պատմագիտական հետազոտության իրականացման համար:

Սահակյան Նաիրային 2,160 հազար ՀՀ դրամի չափով՝ պատմագիտական հետազոտության իրականացման համար:

Բոբոխյան Արսենին 2,016 հազար ՀՀ դրամի չափով՝ պատմագիտական հետազոտության իրականացման համար:

7. Դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	1,792	-
Տրված կանխավճարներ	2,000	2,600
Պարտքեր հարկերի և այլ վճարների գծով	-	18
	3,792	2,618

8. Դրամական միջոցներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամարկղ	-	1
Մնացորդներ բանկերում ՀՀ դրամով	2,356	4,590
Մնացորդներ բանկերում արտարժույթով	-	1
	2,356	4,592

9. Ակտիվներին / Եկամուտներին վերաբերող շնորհներ

9.1 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	20,065	1,059
Ստացված շնորհներ	18,235	19,985
Շնորհից եկամուտ	(10,048)	(979)
Տարեվերջի մնացորդ	28,252	20,065

9.2 Եկամուտներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	5,610	4,344
Ստացված շնորհներ	21,980	34,478
Շնորհից եկամուտ	(23,800)	(33,212)
Տարեվերջի մնացորդ	3,790	5,610

2021թ.

Հիմնադրամը ըստ կնքած գումարի նվիրատվության պայմանագրի, 2021թ. Միքայել Միհասյանից ստացել է 40,215 հազ. ՀՀ դրամ շնորհ կանոնադրական նպատակներով օգտագործելու համար:

Հիմնադրամը 2021թ. կատարել է գրքերի նվիրատվություն 328 հազ. դրամի:

2020թ.

Հիմնադրամը ըստ 15 մարտի 2018թ.-ին կնքած գումարի նվիրատվության պայմանագրի, 2020թ. Միքայել Միհասյանից ստացել է 49,692 հազ. ՀՀ դրամ շնորհ կանոնադրական նպատակներով օգտագործելու համար, ինչպես նաև 4,670 հազ. ՀՀ դրամ արժեքով գույք:

Հիմնադրամը կատարել 2020թ. հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռք բերում:

Հիմնադրամը 2020թ. իրականացրել է Առերեսում խորագրով վիզուալ արվեստի ոլորտում ստեղծագործությունների ստեղծման դրամաշնորհային ծրագիրը, որի շրջանակներում կատարել են հետևյալ նվիրատվությունները.

Շախբազյան Շահանեին 800 հազար ՀՀ դրամի չափով՝ վիզուալ արվեստի ոլորտում Առերեսում թեմայով ստեղծագործության ստեղծման համար:

Պետրոսյան Ռուզաննային 600 հազար ՀՀ դրամի չափով՝ վիզուալ արվեստի ոլորտում Առերեսում թեմայով ստեղծագործության ստեղծման համար:

Պողոսյան Էդիկին 400 հազար ՀՀ դրամի չափով՝ վիզուալ արվեստի ոլորտում Առերեսում թեմայով ստեղծագործության ստեղծման համար:

Հիմնադրամը 2020թ ընթացքում կատարել է 3,300 հազար ՀՀ դրամի չափով նվիրատվություն արվեստագետ Արշակ Սարգսյանին Հռոմում «Angels and Demons» նկարների ցուցահանդեսի իրականացման նպատակով:

10. Կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կրեդիտորական պարտքեր ստացված ծառայությունների գծով	15	88
Կրեդիտորական պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով	635	-
Այլ պարտքեր	48	-
	698	88

11. Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	608	-
Հետաձգված հարկ	-	-
	608	-

12. Ծրագրի իրականացում

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխհատուցում աշխատակիցներին	10,906	13,950
Մաշվածության, ամորտիզացիայի և ապաստարկման ծախսեր	1,269	1,399
Մարքեթինգի և գովազդի ծախսեր	1,474	1,861
Վարձակալական ծախսեր	3,243	4,142
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	1,217	2,558
Բանկային ծախսեր	38	77
Դրամաշնորհային ծախսեր	7,824	7,520
Արձակուրդի պահուստի ծախսեր	757	1,512
Այլ ծախսեր	983	1,228
	27,711	34,247

13. Ֆինանսական գործիքներ

13.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.6-ում:

13.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր		
Առևտրային դեբիտորական պարտքեր	1,792	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	2,356	4,592
	4,148	4,592

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	63	88
	63	88

14. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Հիմնադրամը իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտարժութային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

14.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Հիմնադրամի գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է արտարժութային, տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը և կապիտալի գնային ռիսկին (տես՝ բ) ստորև):

բ) Արտարժութային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Հիմնադրամի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով:

գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը ֆինանսական կորուստներ կարող է կրել:

Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

դ) Իրացվելիության ռիսկ

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

15. Պայմանական պարտավորություններ

15.1 Գործարար միջավայր

Հայաստանի Հանրապետությունում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանի Հանրապետությունում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում:

15.2 Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Հիմնադրամը չունի իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին Հիմնադրամի գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասի ապահովագրություն: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական դրության վրա:

15.3 Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ պահանջում է մեկնաբանություններ: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են վերանայման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:
Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանի Հանրապետությունում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ կատարել է համապատասխան հատկացումներ հարկային պարտավորությունների գծով՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իշխանությունների մեկնաբանությունները կարող են տարբերվել:

16. Գործարքներ կապակցված կողմերի միջև

16.1 Վերահսկողություն

Հիմնադրամը վերահսկվում է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից:

16.2 Գործարքներ ղեկավարության հետ

Հիմնադրամի տնօրենը ստացել է հետևյալ վարձատրությունը՝

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ	4,814	4,892
	4,814	4,892

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 16.08.2022 13:11